ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի մայիսի 13-ի, ժամը 14:00-ի նիստի
N 11 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Հրայր Մաքսիմի Մուրադյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողը նշեց. Հ.Մ.Մուրադյանը 2009 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. նախ՝ 01.09.2009-01.07.2011՝ արժեթղթերի շուկայի ամբիոնում՝ ասիստենտ (համատեղությամբ), 01.09.2011-26.06.2012՝ ֆինանսական շուկաների և ինստիտուտների ամբիոնում՝ ասիստենտ, 27.06.2012-31.08.2017՝ բանկային գործի և ապահովագրության ամբիոնում՝ ասիստենտ, 01.09.2017-ից՝ ֆինանսների ամբիոնում, նախ՝ ասիստենտ, իսկ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից՝ դասախոս: Վերջին 3 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Հ.Մ.Մուրադյանը 2009 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նա հրատարակել է 11 գիտական աշխատանք: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 5 է (4 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում, որից 3-ը՝ համահեղինակությամբ, 1 ուսումնամեթոդական հոդված (О внедрении курса "Банковская конкуренция и методы ее оценивания", Журнал Новой экономической ассоциации, IV Российский экономический конгресс, Москва, 2020):

Հ.Մ.Մուրադյանը վարում է «Ներդրումների կառավարում», «Հարկային համակարգ», «Արժեթղթերով առևտուր և բորսայական գործ» «Արժեթղթերի

շուկա» և մի շարք այլ դասընթացներ: Դասախոսությունները կարդում է տեսական ու գործնական բարձր մակարդակով՝ հաշվի առնելով ժամանակակից պայմաններում շուկայական տնտեսության առանձնահատկությունները: Վայելում է գործընկերների և ուսանողների հարգանքը:

Ֆինանսների ամբիոնը և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն երաշխավորել են Հ.Մ.Մուրադյանին՝ մասնակցելու Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին և քվեարկությանը մասնակցել են 46-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 45, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 1:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Հրայր Մաքսիմի Մուրադյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ կառավարության՝ 2022 թվականի փետրվարի 17-ի N 177-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» (հաստատված ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ) 2-րդ գլխի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝ **Հրայր Մաքսիմի Մուրադյանին** շնորհել **դոցենտի** գիտական կոչում **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ:

2. Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. մայիսի 13
Երևան